



Մայրենի

5-րդ դասարան ընդունվողների համար, 2016-2017 ուստարի

Մարի լանջին՝ անտառով շրջապատված հինավուրց ավերակում, մի մարդ էր ապրում: Մենակ էր նա բայց չկարծեք թե մարդկանցից հեռու (**ապրել**): Նա աշխարհի ամենաբարի մարդն էր: Լույսը բացվում էր թե չէ, նա վերցնում էր իր միակ ընկեր ջութակն ու իջնում սարերից: Իջնում էր ու ամբողջ օրը թափառում գյուղից գյուղ, քաղաքից քաղաք: Ամեն տեղ նա մխիթարում էր վշտացածներին, բժշկում էր հիվանդներին և նվագում էր ամենքի համար: Նա նվագում էր մեծ հրապարակներում, բազմաթիվ մարդկանց առջև: Երբ մարդիկ լսում էին նրա մեղմանուշ նվագը, (**գոջալ**) իրենց մեղքերի համար, թշնամիները հաշտվում էին ու համբուրվում, ամենքը սիրո ու եղբայրության մասին էին խոսում, ամենուրեք վերանում էր չարն ու վատը: Եվ աշխարհիս ամենաբարի մարդն ամեն երեկո իր բնակարանն էր վերադառնում՝ հպարտ ու ինքնագոհ, որ այդ օրն էլ պետք եկավ մարդկանց, բարի գործեր (**կատարել**) նրանց համար:

Մի անգամ՝ ուշ գիշերով, նա վերադառնում էր մոտակա գյուղից: Գիշերը մռայլ էր ու խավար, անտառում ցուրտ էր ու քամի: Նա ոչնչից չէր վախենում, որովհետև աշխարհում ոչ մի թշնամի ու չարակամ մարդ չունէր: Անտառում նա շատ էր այդպիսի գիշերներ անցկացրել: Նա իր սիրելի ջութակը սեղմել էր կոնատակին և առաջ էր գնում խիտ ծառերի շարքերի միջով: Քամին խաղում էր նրա գլխի ճերմակ ալիքների ու երկայն մորուքի հետ:

Հանկարծ հեռվից լսվեց գայլերի սարսափելի ոռնոցը: Ծերունին զգաստացավ. հասկացավ ամեն բան, սակայն բոլորովին չսարսռեց:

Վերցրեց ջութակն ու նստեց մի կոճղի վրա:

Շուտով խավարի միջից կայծերի պես պսպղացին գայլերի աչքերը, և մի փոքր անց նրանց ահագին ոհմակը շրջապատեց մարդուն: Մի բռպե ևս, և գայլերը կրկնտեին ծերունուն,

կիսլիսլեին միմյանց ճանկերից: Բայց հանկարծ հնչեց մի մեղմանուշ, կախարդական մեղեդի, և գազանները քարացան իրենց տեղերում, գլուխները դրին առջևի թաթերի վրա ու կրակոտ աչքերը (**հառել**) ծերունուն: Քամին սքանչելի ձայները տարածում էր անտառի հեռուները... Ի՞նչ



էին երգում ծերունու ջութակի լարերը: Նրանց բեկբեկուն ելևեջներով ո՞վ էր խոսում այդքան հզոր ու ազդու, որ սաստում էր ոչ միայն մարդկանց, այլև գիշատիչ գազաններին...

1. Նշի՛ր երկու բան, որոնցով նկարագրվում է ծերունու նվագած մեղեդին:

Պատասխան՝ _____

2. Ինչու՞ ծերունին ոչնչից չէր վախենում:

- 1) Նա ոչնչից չէր վախենում, որովհետև անտառում գազան չկար:
- 2) Նա ոչնչից չէր վախենում, որովհետև ձեռքին մահակ ուներ:
- 3) Նա ոչնչից չէր վախենում, որովհետև աշխարհում ոչ մի թշնամի ու չարակամ մարդ չուներ:
- 4) Նա ոչնչից չէր վախենում, որովհետև շրջապատված էր քաջ մարդկանցով:

3. ա. Ինչու՞ էր աշխարհի ամենաբարի մարդն ամեն երեկո իր բնակարան վերադառնում հպարտ ու ինքնագոհ:

- 1) Վերադառնում էր հպարտ ու ինքնագոհ, որովհետև անտառում ջութակ էր գտել:
- 2) Վերադառնում էր հպարտ ու ինքնագոհ, որ այդ օրն էլ պետք եկավ մարդկանց, բարի գործեր կատարեց նրանց համար:
- 3) Վերադառնում էր հպարտ ու ինքնագոհ, որովհետև կարողացել էր սաստել գազաններին:
- 4) Վերադառնում էր հպարտ ու ինքնագոհ, քանի որ այդ օրը եղանակը բարենպաստ էր:

բ. Ինչի՞ց ենք հասկանում, որ ծերունին բարի է:

Պատասխան՝ _____

4. Ի՞նչ էին երգում ծերունու ջութակի լարերը:

Պատասխան՝ _____

5. ա. Ինչպե՞ս ազդեց կախարդական մեղեդին կենդանիների վրա:

Պատասխան՝ _____

բ. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ կախարդական մեղեդին մարդկանց վրա:

Պատասխան՝ _____

6. Փակագծերում դրված բայերը տարբերակներում ներկայացված են որոշակի դեմքով, թվով և ժամանակով: Ըստ տեքստի՝ ո՞ր տարբերակի բայի ձևն է սխալ:

1) *ապրել* – էր ապրում

3) *կատարել* – կատարում էին

2) *զղջալ* - զղջում էին

4) *հառել* – հառեցին

7. Տեքստից դու՛րս գրիր մեկ հարցական նախադասություն:

Պատասխան՝ _____

8. Տրված բառակապակցությունների ընդգծված բառերում բաց թողած տառի կամ տառակապակցության տեղում դատարկ վանդակ է: Արտագրի՛ր ընդգծված բառերը՝ դատարկ վանդակի փոխարեն լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը.

տուն վարձել, արժեցնող բուրմունք, համարժակ շարժվել, մեղմօրոր քամի

Պատասխան՝ _____, _____, _____, _____

9. Ո՞րն է տրված նախադասության ենթական:

Եվ աշխարհիս ամենաբարի մարդն ամեն երեկո իր բնակարանն էր վերադառնում՝ հպարտ ու ինքնագոհ:

Պատասխան՝ _____

10. Տրված նախադասության մեջ բաց է թողած մեկ կետադրական նշան: Արտագրի՛ր այդ նախադասությունը և դի՛ր բաց թողած կետադրական նշանը:

Մայրն անընդհատ արգելում էր տղաներին կերակրել թռչուններին և ասում էր որ կեղտոտում են պատշգամբը:

Պատասխան՝ _____

11. Ի՞նչ է նշանակում մխիթարել բառը:

- 1) հուզվել
- 2) մտածել
- 3) սփռվել
- 4) զայրացնել

12. Տրված բառերից որի՞ ղիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության:

- 1) *մեղմանուշ* – բարդ
- 2) *ամենաբարի* – ածանցավոր
- 3) *կախարդական* – բարդ
- 4) *գիշեր* – պարզ

13. Տրված բառերից յուրաքանչյուրի ղիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:

- 1) *նվազ* – գոյական
- 2) *սակայն* – բայ
- 3) *ճերմակ* – ածական
- 4) *այդքան* – դերանուն

14. Արտագրի՛ր նախադասությունը՝ փակագծերում տրված բառերը ձևափոխելով և տեղադրելով բաց թողած տեղերում: (ամպ, արև)

Անձրևաբերսահում են երկնքում և մերթընդմերթ փաթաթում :

Պատասխան՝ _____

Ընդհանուր միավորը՝ _____